

**ԲՆԱԳՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ABSTRACT

**THE PROBLEM OF SELECTION OF AUTHENTIC TEXTS IN THE
AREA ORIENTED ENGLISH COURSE**

The selection of area studies texts for educational purposes is important from the point of view of their content, functions, educational potential, mastery of relevant vocabulary, and acquisition of background knowledge by students. The problem consists, on the one hand, in the selection of authentic area studies texts from the point of view of the didactic principle of accessibility, as well as the principle of consciousness. On the other hand, it is necessary to overcome the difficulties that arise when working with authentic texts within area studies. An important issue is also the development of the necessary procedures for working with authentic texts. It is also difficult to apply the principle of authenticity, which involves constant, consistent updating of sources, which can be taken from English weekly newspapers, magazines and various Internet sites. Though nowadays they are available on the Internet, their selection and use for educational purposes is very difficult.

During the study, methods of content and component analysis of authentic texts, methods of analyzing their functional characteristics were

* e-mail: r.kulikyan@ysu.am



Received: 13/05/2024

Revised: 20/05/2024

Accepted: 22/05/2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License. © The Author(s) 2024

used. In general, a comparative analysis reveals the features of didactic, authentic, quasi-authentic texts from the point of view of their use for educational purposes .

Key words: English sublanguage, authentic text, creolized text, precedent text, background knowledge, hypertext, discourse, thematic forum, blog, social network.

РЕЗЮМЕ ПРОБЛЕМА ОТБОРА АУТЕНТИЧНЫХ ТЕКСТОВ В ПРЕПОДАВАНИИ СТРАНОВЕДЕНИЯ НА АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Отбор страноведческих текстов в учебных целях важен с точки зрения их содержания, функций, образовательного потенциала, усвоения соответствующей лексики, приобретения фоновых знаний учащимися. Проблема состоит, с одной стороны, в отборе аутентичных страноведческих текстов с точки зрения дидактического принципа доступности, а также принципа сознательности. С другой стороны, необходимо преодолеть трудности, возникающие при работе с аутентичными страноведческими текстами. Важным вопросом является также разработка необходимых процедур работы с аутентичными текстами.

Трудно также применить принцип аутентичности, который предполагает постоянное, последовательное обновление источников, которые можно брать из английских еженедельных газет, журналов и различных интернет-сайтов. Хотя, на современном этапе они доступны благодаря интернету, их отбор и применение в образовательных целях представляет большую трудность.

В ходе исследования были использованы методы контентного, компонентного анализа аутентичных текстов, методы анализа их функциональных характеристик. В целом, сопоставительный анализ выявляет особенности дидактических, аутентичных, квазиаутентичных текстов с точки зрения использования их в учебных целях.

Ключевые слова: английский подъязык, аутентичный текст, креолизованный текст, прецедентный текст, фоновые знания, гипертекст, дискурс, тематический форум, блог, социальная сеть.

ԱՄՓՈՓՈՒՄ

Երկրագիտական բնագրերի ընտրությունը կարևորվում է դրանց բովանդակության, գործառույթների, համապատասխան բառապաշարի յուրացման, ուսանողների հենքային գիտելիքների ձեռքբերման տեսանկյուններից: Խնդիր է դրվում, մի կողմից, երկրագիտական ուղղվածության բնագրերն ընտրել դիդակտիկական մատչելիության, ինչպես նաև գիտականության սկզբունքների կիրառման տեսանկյուններից: Մյուս կողմից, անհրաժեշտություն է առաջանում հաղթահարել այն դժվարությունները, որոնք առաջ են գալիս երկրագիտական ուղղվածության բնագրերի շուրջ աշխատելիս:

Կարևոր խնդիր է նաև բնագրերի հետ աշխատանքի անհրաժեշտ ընթացակարգեր մշակելը: Դժվարություն է ներկայացնում նաև բնագրայնության սկզբունքի կիրառումը, որը ենթադրում է շարունակաբար, հետևողականորեն թարմացնել այն սկզբնաղբյուրները, որոնք կարելի է վերցնել անգլիական շաբաթաթերթերից, ամսագրերից, համացանցային տարբեր կայքերից:

Մի կողմից, արդի փուլում դրանք համացանցի շնորհիվ բավականին մատչելի են դարձել: Մյուս կողմից, դրանց ընտրությունը և ուսուցողական նպատակներով կիրառումը մեծ դժվարություն է ներկայացնում:

Հետազոտության ընթացքում կիրառվել են բնագրերի բովանդակային, բաղադրիչային վերլուծության, դրանց գործառական բնութագրերի բացահայտման մեթոդները: Ընդհանուր առմամբ համեմատական վերլուծությամբ բացահայտվում են դիդակտիկական, կիսաբնագրային, կվազիբնագրային, բնագրային տեքստերի, գերտեքստի, կրեոլացված տեքստի, վիրտուալ խոսույթի առանձնահատկությունները դրանց ուսուցողական նպատակներով կիրառելու տեսանկյունից:

Բանալի բառեր՝ անզլերենի ենթալեզու, բնագիր, կրեոլ տեքստ, նախադեպային տեքստ, հենքային գիտելիք, հիպերտեքստ, խոսույթ, թեմատիկ ֆորում, համացանցային օրագիր, սոցիալական ցանց:

Ներածություն. Մասնագիտական կողմնորոշման անզլերենի ուսուցումն անհրաժեշտ է կազմակերպել, հաշվի առնելով երկրագիտական ուղղվածության բնագրերի կամ բնագրային տեքստերի ներմուծման և ուսուցման առանձնահատկությունները: Մասնագիտական կողմնորոշման անզլերենի ենթալեզվի ուսուցման դասընթացը նախագծելիս, անհրաժեշտ է իրականացնել ուսումնական և բնագրային տեքստերի ընտրություն, հաշվի առնելով դրանց բովանդակությունը, ուսանողների նախասիրությունները, դրդապատճառային ուղղվածությունը, հետաքրքրությունները, իմացական, մասնագիտական պահանջմունքները, տարիքը, և այլն:

Մասնագիտական կողմնորոշման անզլերենի ենթալեզվի ուսուցման կազմակերպման հիմնական նպատակը ֆոնային գիտելիքների շարունակական զարգացում ապահովելն է: Այդ տեսանկյունից կարևորվում է բնագրերի հետ աշխատանքի անհրաժեշտ ընթացակարգեր մշակելը: Ավանդաբար երկրագիտական բնույթի տեքստերը ստեղծելու գտել ոչ լեզվական բուհերի համար նախատեսված դասագրքերում: Ավելին, երկրագիտական պրոբլեմատիկան նույնպես ներկայացվում էր ուսումնական տեքստերի միջոցով:

Ընդհանուր առմամբ, ժամաքանակի սղության պատճառով, դասախոսները հազվադեպ էին երկրագիտական բնույթի

մասնագիտական տեքստեր վերցնում անգլիական շաբաթաթերթերից, ամսագրերից, համացանցային տարբեր կայքերից: Այս համատեքստում կարևոր է երկրագիտական տեքստի սահմանումը, քանի որ մենք գործ ունենք ոչ երկրագիտական տեքստերի, այլ երկրագիտական ուղղվածության մասնագիտական կողմնորոշման տեքստերի ընտրության հիմնախնդրի հետ: Ինչպես նշում է Ն. Լ. Կուչերենկոն. «Բնագրային տեքստն օրիգինալ տեքստ է, որը մեթոդական մշակման չի ենթարկվում: Այլ հեղինակներ ենթադրում են, որ տեքստը կարող է որոշակիորեն ենթարկվել դիդակտիկական մշակման, այն դեպքում, եթե չի խախտվում նրանց հավաստիությունը, ճշմարտացիությունը և չի կորսվում տեքստի հանրամշակութային ֆոնը: Եթե լրագրի տեքստը համարենք բնագրային, ապա մենք գտնում ենք, որ այն կարելի է որոշ չափով մշակել, համապատասխանաբար կրճատելով ծավալը, տարեթվերը, լրագրողների կամ հեղինակների ազգանունները, առանձին հատվածներ բաց թողնելով, եթե այդ դեպքում չի իրականացվում բառապաշարի փոխարկում, չեն պարզեցվում քերականական կառույցները» (Кучеренко, 2009):

Բնագրերի տեսակները.

Մասնագիտական կողմնորոշման անգլերենի ենթալեզվի ուսուցման համատեքստում առանձնանում է Ն. Վ. Բարիշնիկովի մոտեցումը, ով ներկայացնում է բնագրային տեքստի հետևյալ տեսակները. դիդակտիկական, կիսաբնագրային, կվազիբնագրային,

բնագրային: Ըստ նրա՝ դիդակտիկական տեքստերը ստեղծված են լեզվակիրների կողմից մեթոդական հատուկ նպատակներով: Կիսաբնագրային տեքստերը որպես կանոն հարմարեցված կրճատման կամ բանաքաղման միջոցով ուսուցողական խնդիրների լուծում հետապնդող տեքստերն են: Կվազիբնագրային տեքստերի դեպքում թույլատրվում է կիսաբնագրային տեքստերի հաշվին գոյական անունների որոշակի կրճատում, եթե դրանք շատ են: Ընդհանուր առմամբ, բաց են թողնում տեքստի դժվարություն ներկայացնող այն բաղադրամասերը, որոնք մատչելի չեն սովորողներին: «Բնագրային են այն տեքստերը, որոնք գրված են լեզվակիրների կողմից լեզվակիրների համար» (Барышников, 2003: 63): Մասնագիտական կողմնորոշման երկրագիտական բնույթի բնագրային տեքստերի ընտրությունը կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

- բնագրային երկրագիտական կամ լեզվաերկրագիտական տեքստը պետք է լինի մատչելի, հետաքրքիր, տեղեկատվական առումով բազմաբնույթ և արդիական,

- այն պետք է իրականացնի կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառույթներ,

- այն պետք է արտացոլի անգլախոս երկրների հանրամշակութային և հանրալեզվական բնույթի իրողությունները, մշակութային և գործաբանական բնույթի իրակությունները:

Մասնագիտական կողմնորոշման ենթալեզվի ուսուցումը ենթադրում է բնագրային տեքստերի հետևողական

ընթերցանություն: Ըստ Կ. Ե. Վորոնկովայի՝ «Դաս-դասարանային համակարգի պայմաններում միջմշակութային բաղադրամաս պարունակող բնագրային տեքստերը խթանում են պրոբլեմային իրավիճակներ ստեղծելուն՝ անգլերենի ուսուցման բոլոր փուլերում: Այդպիսի տեքստերն արդյունավետ են նաև այլ՝ բարոյական արժեքների համակարգով մշակույթի նկատմամբ հարգալից և հանդուրժողական վերաբերմունք դաստիարակելու առումով: «Բնագրային տեքստերը նպաստում են բազմազան խնդիրների քննարկման ժամանակ ոչ միայն ուսումնասիրվող լեզվի և մշակույթի, այլև սեփական մշակույթի ինքնատիպությունը հասկանալուն և բացահայտելուն» (Воронкова, 2004): Մասնագիտական կողմնորոշման երկրագիտական բնույթի բնագրային տեքստերի միջոցով անգլերենի ուսուցման ժամանակակից մեթոդներից է օտարալեզու բազմաժանր տեքստերի հետ աշխատանքը; Դա ենթադրում է հաղորդակցական ունակությունների զարգացման եռափուլ աշխատանք: Առաջին փուլում տեքստերի հետ աշխատանքն իրականացվում է ընկալողական մակարդակում: Երկրորդ փուլում ուսանողները փորձում են վերարտադրել ընթերցած և ընկալած տեքստը: Երրորդ փուլում ուսանողները քննարկում են այն խնդիրները, որոնք տեղ են գտել տվյալ տեքստում:

Թե՛ մասնագիտական կողմնորոշման, թե՛ մասնագիտական դասընթացներում հնարավոր չէ պատկերացնել համապատասխան բառապաշարի յուրացումն առանց կրեոլ բնագրային տեքստերի հետ աշխատանքի: Ինչ վերաբերում է երկրագիտական տեքստերին, ապա

դրանք կարող են դիդակտիկական առումով լինել արդյունավետ, եթե կրեոլ են, այսինքն՝ համադրում են խոսքային տեղեկատվությունը համապատասխան պատկերների, նկարների, լուսաբանումների և այլ ոչ խոսքային նշանների հետ: Վառ օրինակ է այսպես կոչված ուղեցուցային կամ գովազդային տեքստերը: Կրեոլային տեքստերի դերն ավելի է կարևորվում հեռահաղորդակցական միջոցների շարունակական զարգացման պայմաններում:

Նույն զբոսաշրջային, թանգարանային, ընդհանուր տեղեկատվական ուղեցույցներին կամ տարբեր բնույթի գովազդներին կարելի է ծանոթանալ համացանցով, տարբեր բնույթի թվային և ոչ թվային տեսահոլովակներով: Ըստ Յու. Գ. Ալեքսեևի սահմանման՝ «Կրեոլացված կոչվում է այն տեքստը, որը բաղկացած է տարբեր նշանաբանական համակարգերից» (Алексеев 2002:23): Ըստ Յու. Ա. Սորոկինի՝ կրեոլոցված են այն տեքստերը, «որոնց ֆակտուրան բաղկացած է երկու ոչ համասեռ մասից՝ խոսքային և ոչ խոսքային, որը պատկանում է այլ նշանային համակարգի, ի տարբերություն բնական լեզվի» (Сорокин, 1990): Կրեոլային տեքստը բնորոշվում է որպես «բարդ բնագիր, որի մեջ խոսքային և պատկերային տարրերը կազմում են մի տեսողական, կառուցվածքային, իմաստային և գործառական ամբողջություն, որի հիմնական նպատակը հասցեատիրոջ վրա գործաբանական տեսանկյունից համալիր ներգործություն ունենալն է» (Анисимова, 2003:17): Ըստ Ե. Ե. Անիսիմովայի. «Կրեոլային տեքստը սկզբունքայնորեն չի տարբերվում համասեռ խոսքային տեքստից:

Նրան բնորոշ է են նույն տեքստային ամբողջականության, կապվածության, եղանակի, տեղի, ժամանակի կարգերը» (Анисимова, 2003:17): Որոշ լեզվաբաններ գործածում են նշանաբանական առումով «բարդ տեքստ» հասկացությունը, այն առումով, որ կրեոլային տեքստում հասցեատիրոջ մտադրությունն իրացվում է ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքային կամ պատկերային կողմի միջոցով:

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսանկյունից կարևոր է այն, որ կրեոլային տեքստը համադրում է խոսքային և ոչ խոսքային հաղորդակցական միջոցները: Լեզվաբանության մեջ տարբերակում են մասնակի և լրիվ կրեոլացման տեսակները: Ոչ խոսքային /իկոնային/ բաղադրամասը խաղում է երկրորդական դեր, իսկ լրիվ կրեոլացված տեքստերում ոչ խոսքային բաղադրամասը պարտադիր է: Կրեոլ տեքստի վառ օրինակ են ուղեցուցային տեքստերը, որոնք համակցում են համապատասխան տեսարժան վայրերի մասին նկարագրությունները և պատկերները:

Ուղեցույցները հիմնականում լինում են երկու տեսակի՝ գովազդային-տեղեկատու և տեղեկատու-գովազդային: Դրանք կարող են լինել պրոսպեկտներ, բուկլետներ և բրոշյուրներ (a self-guide, a free guide, a brief guide) և հեղինակային ուղեցույցներ, որոնք ներկայացնում են տեղեկատվական-գովազդային և տեղեկատվական հանրագիտարանային հրատարակություններ (a tourist handbook, a souvenir guide, a guide book, a complete guide) (Алексеев, 2002): Ըստ Ա. Վ. Պրոտչենկոյի՝ «Ուղեցուցային բնագրերի վերլուծությունը ցույց է

տալիս, որ դրանք հիմնականում տալիս են պատմական տեղեկատվություն կամ ծանուցում (the History of...), տեսարժան վայրերի նկարագրություն (What to See; Sights to See), քարտեզ (General Map; Location Map), գտնվելու տեղի, տեղանքի մասին տեղեկատվություն (How to Get to...), այցելության ժամանակի և արժեքի մասին (Opening Hours; Admission Charge), զբոսաշրջային ծրագրերի մասին (Tours and Programs), մոտակա սրճարանների և հուշանվերների խանութների մասին (Cafes and Souvenir Shops), սահմանափակ կարողություններով մարդկանց մասին տեղեկատվություն (Services for Disabled Visitors) տեղեկատվական ծառայության անհրաժեշտ հեռախոսահամարները (Useful Telephone Numbers) (Протченко, 2006:7):

Երկրագիտական ուղղվածության բնագրերը որպես ուսուցման միջոց.

Մեթոդական տեսանկյունից կարևոր է այն, որ ուսանողներն իրենք փնտրեն և գտնեն բուկլետները, բրոշյուրները (a self-guide, a free guide, a brief guide), որոնցում պատկերային բաղադրամասը կարող է լինել երբեմն ավելի տեղեկատվական, քան բուն խոսքային բնագիրը: Առաջին հայացքից պարզ թվացող ուղեցուցային բնագրերը պարունակում են բավականին հետաքրքիր բառապաշար, որոնք լուսաբանվում են համապատասխան նկարներով, քարտեզներով, գծապատկերներով: Շատ դեպքերում ուղեցույցը կարող է լինել յուրահատուկ կրեոլ, բնագիր և այն ոչ միայն տեղեկատվություն է հայտնում տեսարժան վայրերի մասին, այլև հուշանվեր է

հանդիսանում a souvenir guide: Այն ոչ միայն խորացնում և ընդլայնում է ընթերցողի մտահորիզոնը, այլև զինում է նրան ճիշտ, ստույգ լեզվաերկրագիտական գիտելիքներով: Ինչպես նշում է Ա. Վ. Պրոտչենկոն. «Այդ արժեքները կարելի է բացահայտել՝ ուսումնասիրելով ուղեցույցներում ներկայացված պատմաշակութային վայրերը, օրինակ՝ Անգլիայի Բանկը:

“The Bank of England was founded in 1694. It is also known as “The Old Lady of Threadneedle Street”, after the street in which the main entrance stands. The museum is housed within the Bank of England; right at the heart of the City of London. It traces the history of the Bank from its foundation by Royal Charter to its role today as the nation’s central bank. There are gold bars here, dating from ancient times, to the modern bars, coins and a unique collection of bank notes”.

Սույն տեքստում ուրվագծվում են երեք թեմատիկ գիծ՝ բանկի պատմությունը, հավաքածուի նկարագրությունը և լրացուցիչ տեղեկատվություն: Old, history, ancient times, unique, Royal բառերը բանկի հիմնադրման տարեթվի հետ (1694) ընդգծում են այդ տեսարժան վայրի բացառիկությունը և պատմական արժեքը: Բանկի զվարճալի անվանումը, երբ այն համետավում է Թրեդնիդլ փողոցի հետ /տեղը, որտեղ գտնվում է բանկը/, ևս մեկ անգամ ընդգծում է բրիտանացիների պահպանողականությունը և ավանդապաշտությունը» (Протченко, 2006:7): Ուսանողները դժվարությամբ են թարգմանում հատկապես նախադեպային տեքստերը, արտահայտությունները, քանի որ դրա համար

անհրաժեշտ է ունենալ լեզվակրին հավասար ֆոնային գիտելիքներ: Օրինակ՝ Լոնդոնի տեսարժան վայրերին նվիրված տեքստում, մենք գործ ունենք նախադեպային տարրի հետ:

“His (Wordsworth’s) sister, Dorothy Wordsworth, says in her Journal: “We mounted the Dover Coach at Charing Cross. It was a beautiful morning. The City, St. Paul’s with the River and a multitude of little boats, made a most beautiful sight as we crossed Westminster Bridge. The houses were not overhung by their cloud of smoke, and they were spread out endlessly, yet the sun shone so brightly, with such a pure light, that there was even something like the purity, of one of nature’s own grand spectacles.” (Travelling in London):

Մույն տեքստում մենք գործ ունենք երկու տեքստի հետ, երբ մեկը մյուսի մասն է կազմում: Նախադեպային տարրը լեզվակիրների համար աչքի է ընկնում նրանով, որտեղ միանում են գեղարվեստական և հրապարակախոսական-գիտական ոճերը: Դա յուրահատուկ ոճական հնար է և դրա արդյունքում տեսարժան վայրի նկարագրությունը տպավորվում է և մտապահվում: Այդպիսի տեքստերի կիրառումը ուսուցողական նպատակներով ենթադրում է համապատասխան մեթոդիկայի մշակում, հատկապես երբ խոսք է գնում ոչ լեզվական բուհի մասին:

Այսպիսով, կարելի է պնդել, որ գեղարվեստական, նախադեպային տարրերով ուղեցույցների կիրառումը մասնագիտական կողմնորոշման անզլերեն ենթալեզվի ուսուցման գործընթացում պահանջում է ուսանողների լեզվագիտական, գործարանական

գիտելիքների բարձր մակարդակ: Արդյունավետ է կիրառել ուղեցույցները որպես հիպերտեքստ: Ինչպես հայտնի է, «հիպերտեքստերը կառուցվածքային առումով գծային չեն և ներառում են իրար հետ չհատվող տեղեկատվական աղբյուրներ, ընդ որում՝ դրանց միջև կարող են հաստատվել խաչաձև հղումներ» (Шехтман, 2005): Ասվածից հետևում է, որ ուղեցուցային տեքստը յուրահատուկ հիպերտեքստ է: Դա կարևոր է այն առումով, որ արդի փուլում ուղեցույցները հիմնականում ունեն իրենց էլեկտրոնային կամ համացանցային տարբերակը և բացի այն փաստից, որ ավելի մատչելի են, նաև կարող են ստեղծվել և համապատասխան բլոգերի միջոցով տարածվել ուսանողների կողմից: Ուղեցույցները նույնպես բնորոշվում են ներտեքստայնությամբ: Դա նշանակում է, որ մի կողմից՝ նախադեպային տարբերը ներկայացնում են ուղեցույցը որպես մշակույթի տարր, մյուս կողմից՝ դրանք կատարում են գունագարդող կամ գրավող գործառույթներ: Ուղեցույցների կարևոր առանձնահատկություններից է լոկատիվ բառապաշարի կիրառումը՝ *above you...*, *on the left*, *next is*, *immediate ahead*, *to the left*, *behind*, *back in*, *to the right*, *at the extreme last end*, *below*:

Ուղեցուցային տեքստերում հանդիպում են մեծ քանակությամբ կարծրատիպային, շարքոն բառապաշար, որոնք մեծ նշանակություն ունեն տվյալ տեքստի բովանդակությունը հասկանալու համար: Ավելի հաճախակի հանդիպող շարքոնային, կարծրատիպային արտահայտություններից են՝ *according to*, *in spite of the fact*, *the explanation lies in*, *generally*, *to be considered a national shrine*, *to be*

worth mentioning (remembering), to be the source of, to serve as, to be famous for, to be of interest for tourists, to be found, to cater for (all tastes), to be (form) an important part of, to be dedicated to, to be popular with, to enjoy a reputation, to be devoted to, to incorporate in:

Ըստ Ա. Վ. Պրոտչենկոյի՝ «Ուղեցույցներում հեղինակային «Եսը», ինչպես դա տեղի է ունենում գիտական ոճում, փոխարինվում է հեղինակային «մենքով»: “In the library we come to the amazing achievement of all.” (World Treasures of the Library of Congress) (Протченко, 2006:20): Դիմելու այդպիսի ձևը բնորոշ չէ գովազդային ուղեցույցին: Վերջին տարիներին հաղորդակցության ոչ խոսքային միջոցների նկատմամբ լեզվաբանների հետաքրքրությունն օրեցօր աճում է: Առաջին պլան է մղվում տեսողական տեղեկատվության դերը: Այդ համատեքստում ձևավորվել են «նշանաբանորեն բարդ», «ոչ ավանդական», «տեսախոսքային», բարդ, բազմակող, կրեոլացված տեքստ հասկացությունները (Е. Е. Анисимова, В. М. Березин, О. В. Пойманова, Ю. А. Сорокин, Е. Ф. Тарасов, L. Bardin, В. Karlavaris, S. D. Sauerbier):

Վարկոր է այն, որ «նշանաբանորեն բարդ», «ոչ ավանդական», «տեսախոսքային», բարդ, բազմակող, «կրեոլացված տեքստ» հասկացությունները հիմնականում ձևավորվել են նշանաբանության շրջանակներում: Ներկայումս հիպերտեքստը կամ գերտեքստը շատ լայն տարածում է գտել ուսումնական հաստատություններում և ընկերություններում, գրադարաններում և իրավաբանական գրասենյակներում, շինարարական կազմակերպություններում,

գիտական լաբորատորիաներում և թանգարաններում և, վերջապես, համակարգիչներով անհատապես գրող և ընթերցող մարդկանց շրջանակներում: Հիպերտեքստի խնդիրն իր մեջ ներառում է իմաստային առումով միմյանց խիստ հակադրող մասեր: Մի կողմից՝ խոսքը գնում է տեքստի ներկայացման ձևի, դրա ոչ գծային դասավորման, տարրերի և դրանց միջև փոխհարաբերությունների բնույթի մասին, ինչպես նաև այն մասին, թե ինչպես է այն ընկալվում (ընթերցվում), և թե ինչպես է բովանդակությունը ձևավորվում ոչ գծային ձևով: Այս առումով ավանդական «գծային» գրավոր տեքստի հետ համեմատած՝ հիպերտեքստը դիտարկվում է որպես գրավոր հաղորդակցման նոր ձև, որը փոխում է «հեղինակ և ընթերցող», «ընթերցում և նամակ» ավանդական հասկացությունները: Մյուս կողմից՝ հիպերտեքստի խնդիրը ներառում է նաև տեխնոլոգիայի հարցեր, որոնց միջոցով հնարավոր է դառնում մեծ քանակությամբ տեքստերի ներկայացումը և յուրացումը ոչ գծային ձևով: Տեխնոլոգիական գործընթացն ավելի կարևոր դեր է խաղում հիպերտեքստերի մեջ, քան ընթերցման և գրության ավանդական կիրառման մեջ: Այս առումով, հիպերտեքստը նոր համակարգչային (տեղեկատվական) տեխնոլոգիա է, որը դիտարկվում է և՛ իր տեղեկատվական առանձնահատկությունների տեսանկյունից, և՛ այն նոր հնարավորությունների տեսանկյունից, որ այն ընձեռում է այլ տեղեկատվական տեխնոլոգիաների հետ համեմատած: Ըստ Տ. Նելսոնի՝ հիպերտեքստը մի այնպիսի տեքստ է, որը ճյուղավորվում է որպես առանձին մասերից բաղկացած մի ամբողջություն՝

միավորված կապերով, որոնք հնարավորություն են ընձեռում ընթերցողին ընտրելու շարժման տարբեր եղանակներ (Smoliar, 1983): Հիպերտեքստի առավել ընդհանուր գործառույթները նույնն են, ինչ որ ավանդական գրավոր տեքստի դեպքում են՝ լինել անհատից անջատված և հեռացված, բառային արտացոլումից դուրս բովանդակության կրողը (մտքեր, գիտելիքներ, և այլն): Հիպերտեքստը կարող է կրել իր մեջ ինչ-որ մեկի կողմից ներկայացված բովանդակություն՝ այլ անձանց այն հաղորդելու և փոխանցելու համար: Դա էլ հենց անմիջական հաղորդակցական գործառույթն է: Այս գործառույթի մեջ հիպերտեքստը նախատեսված է ընթերցման համար, այնպիսի ընթերցման, որի ժամանակ միշտ տեղի են ունենում անցումներ տարրերի, ընթերցվող նյութի բաղկացուցիչ մասերի միջև: Հիպերտեքստը կարող է ամրագրել նաև այն բովանդակությունը, որը համատեղ աշխատանքների ժամանակ ստեղծվել է բազմաթիվ հեղինակների կողմից: Դա տարբեր մարդկանց ստեղծած, բովանդակությունը համադրելու և փոխկապակցվածության մեջ ներկայացնելու, ինչպես նաև այն միասնականության և ամբողջականության տեսանկյունից դիտարկելու համարժեք ձև և միջոց է: Այս գործառույթի առումով հիպերտեքստը չունի իրեն հավասարը:

Տեքստ և խոսույթ.

Գիտնականները սկսեցին առանձնացնել տեքստը խոսույթից, 20-րդ դարի 70-ականներից սկսած: Խոսույթը սկսեցին դիտարկել որպես առանձին մեթոդական միավոր գործարանական լեզվաբանության

գարգացման արդյունքում: Հաղորդակցական ուղղվածություն ունեցող դասընթացն անհնար է նախագծել ու կազմակերպել առանց խոսույթի հետ աշխատելու համապատասխան մեթոդական համակարգ ստեղծելու: Ըստ Ջ. Հարիսի՝ խոսույթը դարձվածների պարզ կապակցում է, ամբողջական արտահայտություն: Ինչպես նշում է Ա. Գ. Մանուկյանը. «Խոսույթն, ի տարբերություն տեքստի, «հաղորդակցական բարդ երևույթ» է և դինամիկ, հարափոփոխ կառույց: Այն տվյալ իրավիճակին համապատասխանող լեզվական ու ոչ լեզվական միջոցներով իրենից ներկայացնում է կոնկրետ իրավիճակներում որոշակի նպատակներ հետապնդող ասելիք, որն ուղղված է խոսակցին: Կարևոր է այն, որ խոսույթը ոչ միայն խոսքային գործունեության արդյունք է, այլ նաև դրա ստեղծման գործընթաց, որն առանձնանում է արտալեզվաբանական տարրերով՝ հաղորդակցական ենթատեքստերով, հաղորդակցական պայմանական իրավիճակներով» (Մանուկյան, 2009:37): Անհրաժեշտ է խոսույթի ստեղծման ու ընկալման հարցում նպատակասլաց ու հետևողական աշխատանք տանել ընտրված դասավանդման մեթոդի կիրառման շուրջ, որը կօգնի ձևավորել խոսության իրազեկություն, ուստի անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պայմանները.

1. խոսույթը հիմնական տեղ է գրավում միջմշակութային հաղորդակցման ուսուցման հարցում,

2. ուսուցումը պետք է առաջնորդվի խոսույթի տեսակների ընտրությամբ, որոնք նախատեսված են կոնկրետ ուսումնական հաստատության համար,

3. «խոսույթի կոնկրետ տարատեսակին ծանոթանալու գործընթացը պետք է հիմնավորվի տեսալսողական միջոցներով՝ տեսաներիզների, սլայդների ցուցադրումներով, որոնց օգնությամբ ներկայացվում է իրական հաղորդակցային իրավիճակ՝ մեկ այլ մշակույթի ներկայացուցիչների օգնությամբ, ովքեր լեզվական և ոչ լեզվական վարք դրսևորելով, ներկայացնում են իրենց մշակույթին բնորոշ իրավիճակներ» (Елухина, 1989):

Ուսանողների երկրագիտական գիտելքիների զարգացման տեսանկյունից կարևորվում է հատկապես վիրտուալ խոսույթը, քանի որ այն հնարավորություն է տալիս օգտվել համացանցային հաղորդակցության հնարավորություններից: Ուսանողները կարող են անգլերենի ուսուցման միջոց դարձնել չաթերը, ֆորումները և համացանցային գիտաժողովները: Տվյալ դասընթացը կազմակերպողները պետք է հաշվի առնեն վիրտուալ խոսույթի թե՛ առավելությունները, թե՛ թերությունները: Վիրտուալ խոսույթը ենթադրում է արհեստական շփում: Դրա հետ մեկտեղ, մենք գործ ունենք իրական զրուցակիցների հետ, ովքեր իրական անձինք են, ունեն երևակայություն, կյանքի փորձ, հոգեբանական խնդիրներ և կարծրատիպեր (Бергельсон, 1999): Վիրտուալ խոսույթի ուսումնական նպատակներով կիրառման տեսանկյունից կարևոր է այն, որ այն, լինելով հանրային մենախոսական և երկխոսական խոսքի բազմաժանր գործառական տարատեսակ, բնութագրվում է մի շարք յուրահատուկ հաղորդակցական միջոցներով: Ինչպես նշում է Ե. Ն. Գալիչկինան. «Համակարգչային հաղորդակցության

առանձնահատկությունն այն է, որ կիրառվում են ոչ միայն մասնագիտական եզրեր, այլև այնպիսի բառամիավորներ, որոնք վերաբերում են տարբեր ոճերի և ռեգիստրերի, որոնք կազմավորվում են համաձայն համակարգչային ցանցի գործարանական դիրքորոշումների և շփման նպատակների» (Галичкина, 2001): Ինչպես հայտնի է վիրտուալ խոսույթ ստեղծող անձինք զվարճալի, տեղեկատվական և այլ աղբյուրներից օգտվող մարդիկ են: Ակնհայտ է, որ զբոսաշրջության կամ գործարարական ոլորտին առնչություն ունեցող անձինք ոչ միայն հետապնդում են շահույթ ստանալու նպատակներ, այլև հանգստի, զվարճանքի նպատակներ:

Մի կողմից՝ ուսանողները կարող են իրենց ինքնուրույն աշխատանքի ժամանակ օգտվել վիրտուալ խոսույթի ընձեռած հնարավորություններից: Մյուս կողմից՝ նրանք կարող են հանդես գալ ուսումնական պայմաններում այսպես կոչված մոդերատորի և այցելույի դերում: Հանդես գալով որպես գործակալ և հաճախորդ, ուսանողները կարող են դառնալ տարբեր նախագծերի հեղինակ, հանդես գալ որպես վիրտուալ անձ, գործընկեր: Վիրտուալ խոսույթի հետ աշխատելու դժվարություններից մեկն այն է, որ ոչ բոլոր ուսանողներն ունեն անձնական համակարգիչ: Խնդիր է նաև այն, որ տվյալ թեմայով հետաքրքրվող խոսակից գտնելը միշտ չէ որ հաջողվում է: Վիրտուալ խոսույթի հիմնական նպատակներից է անհրաժեշտ տեղեկատվության որոնումը: Զբոսաշրջության, սպասարկման, գովազդի ապագա մասնագետները պետք է

կարողանան գտնել համապատասխան տեղեկատվությունը շատ արագ և ժամանակին:

Վիրտուալ խոսույթի ժանրերը.

Նշված ոլորտներում արդյունավետ գործունեություն ծավալելու համար, անհրաժեշտ է հստակորեն պատկերացնել, թե ինչ ժանրերով կարող է ներկայանալ վիրտուալ խոսույթը: Լ. Յու. Իվանովը դասակարգում է հետևյալ ժանրերը.

- Ընդհանուր տեղեկատվական կամ նորությունների ժանրերը /Էլեկտրոնային ՁԼՄ-ներ, որոնք ներառում են նորությունների ամփոփում, թեմատիկ քննարկումներ մեկնաբանություններով և առանց մեկնաբանությունների, հասարակական կարծիքի և քաղաքական գործիչների վարկանիշի որոշման հարցում և մեկնաբանություն, եղանակաի տեսություն և այլն:

- Գիտակրթական և հատուկ տեղեկատվական ժանրեր /Էլեկտրոնային գիտական և ուսումնական հարապարակումներ՝ մենագրություններ, ժողովածուներ, առանձին գիտական հոդվածներ, ձեռնարկներ, տեղեկատուներ, փոխներգործուն ուսումնական դասընթացներ, էլեկտրոնային տվյալների բազային հարցումներ և դրանց պատասխաններ, ռեֆերատներ, ինտերնետ-սեմինարներ, օնլայն-գիտաժողովներ, հոգեբանական թեստեր, էլեկտրոնային բառարաններ: Գեղարվեստական-գրական ժանրեր /Էլեկտրոնային գրադարաններ, համացանցային գրականություն, ամփոփումներ, ամփոփագրեր և գրախոսակներ և այլն: Գործարարական և առևտրային ժանրեր /հայտարարությունների տախտակ, շուկաների

և ոլորտների վերլուծական ամփոփագրեր, աշխատանքի ընդունման ծառայությունների հայտարարություններ, բաներների էլեկտրոնային գովազդային համակարգ և այլն (Иванов, 2002): Լ. Յու. Իվանովն առանձնացնում է ևս մի ժանրերի խումբ, որոնք բնորոշ են ոչ IRC, ֆորումները, էլեկտրոնային փոստի մասնագիտական շփումը: Դրանք են չաթերը, նամակները և այլն: Ակնհայտ է, որ ապագա մասնագետները պետք է կարողանան նախ և առաջ իրականացնել էլեկտրոնային փոստով նամակագրություն: Մեծ երկրագիտական տեղակատվություն են պարունակում Համացանցային օրագրերը, քանի որ դրանք ինքնաարտահայտման մեծ հնարավորություն են տալիս:

Ընդհանուր առմամբ, անգլերենի ուսուցման ընթացքում կարելի է կիրառել վիրտուալ հետևյալ ժանրերը՝ (IRC, համացանցային չաթերը» հարցում, Skypecast և այլն), ICQ, թեմատիկ ֆորումները, համացանցային օրագրերը, հանրությունները, սոցիալական ցանցերը: Համացանցային գրույցը կամ չաթը լավ միջոց է մասնագիտական բնույթի գրույցներ վարելու: Ինչպես հայտնի է, չաթն ունի թեմատիկ կամ զվարճացնող բնույթ: Այստեղից հետևում է, որ թե բուն աշխատանքի ընթացքում, թե ուսուցման գործընթացում ապագա մասնագետները պետք է կարողանան վարել տարբեր բնույթի գրույցներ գրոսաշրջության, գովազդների, գործարար թեմաների շուրջ: ICQ Վիրտուալ խոսույթի ժանր է, որը արտասանվում է I Seek You', համացանցում շփման անվճար հանրաճանաչ համակարգ է, որը հնարավորություն է տալիս գտնել

համացանցում գործընկերներ ըստ հետաքրքրությունների և փոխանակվել նրանց հետ հաղորդագրություններով իրական ժամանակում: Փաստորեն այն իրական շփման տպավորություն է ստեղծում, որին մասնակցում են հասցեագրողը և հասցեատերը: Համացանցային օրագիրը կամ բլոգը կոնկրետ վիրտուալ հաղորդակցվողի մենախոսական խոսույթ է, որը բաղկացած է որոշակի ժամանակագրությամբ բաշխված տեքստերից, որոնք հիմնականում կողմնորոշված են սեփական կարծիքն արտահայտելու ինչպես անձնական, այնպես էլ հասարակական բնույթի որոշակի իրադարձությունների մասին: Կարևորն այն է, որ բլոգի մասնակիցները կարող են մեկնաբանել իրենց այսպես կոչված ընկերների գրառումները: Այստեղ ավելի մեծ ուսուցողական ներուժ ունեն թրմյունիտի կամ համացանցային հանրույթները, որոնք միավորված են ընդհանուր հետաքրքրություններով: Այդ ցանցի միջոցով ապագա մասնագետները կարող են քննարկել բազում հարցեր ընդհանուր և մասնագիտական բնույթի անգլերեն լեզվով: Internet Relay Chat (IRC)-ը համընդհանուր համակարգ է, որի միջոցով համացանցից օգտվողները կարող են իրար հետ շփվել իրական ժամանակում: Այն վիրտուալ խոսույթի ձևավորման նախնական շրջանում առաջին ժանրերից է: Ի տարբերություն IRC-ի վեբ-չաթը կամ համացանցային զրույցը չունի խիստ թեմատիկ բաժանում և հիմնականում ենթադրում է ազատ շփում: Կարևորն այն է, որ հաղորդակցվողների միջին տարիքը 18-35 է: Նրանք հիմնականում հանդես են գալիս մականուններով, որը հնարավորություն է

ընձեռում նրանց ավելի ազատ լինել իրենց մտքերն արտահայտելիս: Այդ հանգամանքը նույնպես կարելի է հաշվի առնել Internet Relay Chat (IRC) համակարգն ուսումնական նպատակներով գործածելիս: Վերջապես, հիպերտեքստն իրենից կարող է ներկայացնել իմաստապես միմյանց հետ փոխկապակցված տեքստային տարրերի բաց և զարգացած համակարգ՝ անկախ իրենց ծագումից, այս կամ այն հեղինակին իրենց պատկանելությունից: Նման հիպերտեքստում մարդը կարող է «ճամփորդել» կամ, ինչպես ընդունված է ասել, տեղափոխվել՝ իր համար բացահայտելով նորը, անսպասելին:

Մասնագիտական կողմնորոշման անզլերենի ուսուցման գործընթացում կարևորվում են անզլալեզու պայմանագրերը, որոնք ձևակերպվում են որպես պատվիրված խոսքային հիպերակտեր: Անզլալեզու փաստաթղթերի գործաբանական կողմնորոշումը պայմանավորված է ազգամշակութային խոսքային ավանդույթներով: Ազգամշակութային չափանիշները գործարարական նամակներում դրսևորում են խոսքային վարվեցողության բանաձևերը, և տիպօրինակները ներակայորեն կրում են իրենց մեջ բովանդակային հասկացութային բնույթի տեղեկատվություն: Մասնագիտական կողմնորոշման տեքստերն ուսուցողական նպատակներով ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել տեքստերի կազմավորման հիմնական լեզվաբանական, հոգեբանական, գործաբանական գործոնները: Ուսուցողական նպատակներով մասնագիտական կողմնորոշման տեքստեր ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել տեքստերի

ազգամշակութային յուրահատկությունները, քանի որ ցանկացած տեքստ կարելի է բնութագրել նախ և առաջ նրանով, թե ինչ բառապաշար է դրան բնորոշ: Այդ առումով առանձնանում է մշակութային կամ բառապաշարը:

Եզրակացություն.

Ազգային նշութավորում ունեցող երկրագիտական ուղղվածության բնագրերի աղբյուր կարող են հանդիսանալ անգլերեն լեզվով լույս տեսնող ժամանակակից շաբաթաթերթերը, ամսագրերը, զբոսաշրջային ուղեցույցները, համացանցային կայքերը: Բնագրային տեքստերի ընտրությունն իրականացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել դիդակտիկական մատչելիության, զննականության, գիտականության սկզբունքները, ինչպես նաև երկրագիտական բնագրերի կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառնությունները: Ինչ վերաբերում է երկրագիտական բնույթի բառապաշարի ուսուցմանը, ապա բնագրերի հետ աշխատանքն արդյունավետ է հատկապես անհամարժեք բառապաշարի, իրույթների, մարզամշակութային նշութավորում ունեցող բառապաշարի ուսուցման տեսանկյունից:

Գրականություն

1. Մանուկյան Ա. Գ. Խոսութային իրազեկության փուլային զարգացման առանձնահատկությունները մասնագիտական անգլերենի դասընթացում, (թեկն. առ.), Ե., 2009, 157 էջ:
2. Алексеев Ю.Г. Креолизованый текст в межкультурной коммуникации // Уч. записки УлГУ. - Одесса, 2002.- С. 27-34.

3. Анисимова Е. Е. Лингвистика текста и межкультурная коммуникация (на материале креолизованных текстов)/ Е.Е. Анисимова. – М.: ACADEMIA, 2003. – 123 с.
4. Барышников Н.В. Методика обучения второму иностранному языку в школе. – М.: Просвещение, 2003.- 159 с.
5. Бергельсон М. Б. Языковые аспекты виртуальной коммуникации. М., 1999. URL: <http://www.rik.ru/vculture/seminar/index.html>.
6. Воронкова Т. Е. Работа с аутентичными текстами, содержащими интрекультурный компонент/Т. Е. Воронкова// Иностранные языки в школе, 2004.- №2- С. 37-40.
7. Галичкина Е. Н. Специфика компьютерного дискурса на английском и русском языках (на материале жанра компьютерных конференций) / Е. Н. Галичкина // Автореф. дис. ... канд. филол. наук. - Волгоград, 2001. - 19 с.
8. Даукина, Т. А. Редакционно-издательского совета Томского государственного педагогического университета Д 14 Чтение и понимание иноязычных культурно-страноведческих текстов: монография / Т. А. Даукина ; ФГБОУ ВО «Томский государственный педагогический университет». – Томск : Изд-во ТГПУ, 2020. – 136 с.
9. Елухина Н.В. Обучение аудированию в русле коммуникативно ориентированной методики/ Н.В.Елухина// ИЯШ.- 1989.- №2. - С.12-13.
10. Иванов Л.Ю. Язык Интернета: заметки лингвиста. // Словарь и культура русской речи. <http://www.ivanoff.ru/rus/OZHWEB.htm> М., 2002 , URL:
11. Кучеренко Н. Л. Особенности обучения чтению публицистических текстов в старших классах общеобразовательной школы//Иностранные языки в школе. – 2009. - №. – 2. – С. 18-23.
12. Протченко, А.В. Типологические и функционально-стилистические характеристики англоязычного путеводителя Текст. / А.В. Протченко: автореф. дис. . канд. филол. наук, Самара, 2006. -20 с.
13. Сорокин Ю.А., Тарасов Е.Ф. Креолизованные тексты и их коммуникативная функция. - М.: Наука,1990.- 227с.
14. Шехтман Н. А. // Понимание речевого произведения и гипертекст. - Оренбург, 2005. - С. 74-85.
15. Genç E. & Şenel M. (2017) The Use of Reading Texts to Teach Cultural Elements in EFL Classes1// International Journal of Languages' Education and Teaching Volume 5, Issue 4, December, p. 356-366.

16. Ilyas M., Afzalb N. (2021) Teaching Literary Texts through Cultural Model to EFL Students// Eurasian Journal of Applied Linguistics, 7(2) .-pp. 22-30.// EJ1312109.pdf (ed.gov)

17. Stephen W. Smoliar, "Review of 'Literary machines' by Ted Nelson, 1983", ACM SIGSOFT Software Engineering Notes, October 1983.
- p.34-36